



ԱՐԲՈՒԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



Կայքէջ՝ anau.am/scientific-journal

doi: 10.52276/25792822-2021.3-295

ՀՏԴ 636.22/28.033

ՄՍԱՅԻՆ ՈՒՂՈՒԹՅԱՆ ՏԱՎԱՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՍՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Ա.Վ. Ազիզյան գ.գ.թ.
Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ա.Մ. Պողոսյան
«Մաունթեյն Բիֆ Զոմփանի» ՍՊԸ
arevik.azizyan.72@mail.ru, ashotboghossian@gmail.com

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝
ցեղ, հատկանիշ, սնվածություն, կերակրում, պահվածք

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Նախրի սնվածության գնահատումն ըստ ստանդարտի հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների ընդհանուր վիճակը և դրանց օրգանիզմում պահուստային նյութերի կուտակումը: Սնվածությունը գնահատվում է 1-10 բալային համակարգով: Ըստ տարվա եղանակի և ֆիզիոլոգիական վիճակի՝ նախրի կովերի միջին սնվածությունը գնահատվում է 5-7 բալ, իսկ հյուծվածությունն ու գերսնվածությունը՝ համապատասխանաբար 3 և 8 բալ: Նշված բալային համակարգը կիրառվում է մսային ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մսային մթերատվության գնահատման նպատակով:

Ուսումնասիրությունները շարունակվում են: Արդյունքները կներկայացվեն առաջիկա հոդվածներում:

Նախաբան

Հայաստանում տավարաբուծությունն անասնաբուծության հիմնական ճյուղն է: Անասնաբուծական մթերքի արտադրությունում տավարաբուծական մթերքը կազմում է ավելի քան 70 %, իսկ արտադրվող մսի 64,4 %-ը ստացվում է տավարաբուծությունից: Հանրապետությունում բուծվող տավարի ընդհանուր գլխաքանակի ավելի քան 90 %-ը կովկասյան գորշ ցեղի ցածր մթերատվությամբ կենդանիներ են: Ուստի մսային մթերատվության բարձրացման տեսանկյունից գերակա խնդիր է մասնագիտացված բարձրմթերատու ցեղի կենդանիների գլխաքանակի ավելացումը (Վ.Լ. Վլադիմիրով, 1989):

Հայաստանում տավարի մսի տարեկան պահանջարկը կազմում է մոտ 60,000 տ, որից ներկրվում է առնվազն 10,000-12,000 տ: Հանրապետությունում մսային ուղղության տավարի մասնագիտացված ցեղեր քիչ են բուծվում: Տավարի միսը հիմնականում ստացվում է կովկասյան գորշ ցեղի կենդանիներից, որոնց 25-30 %-ը կազմում են խոտանված լիատարիք կովերը և ցուլերը, իսկ 70-75 %-ը՝ նախրի վերարտադրության համար ոչ պիտանի մատղաշը: Սպանդային ելունքը կազմում է 52-55 %, մեկ կգ քաշաճի հաշվով ծախսվում է 7,6 կերամիավոր (Խ.Մ. Սիմոնյան, 2004):

ԱՄՆ-ում, Կանադայում, Բելգիայում և այլ զարգացած

երկրներում բուծվում են տավարի մասնագիտացված մսային ուղղության ցեղեր (հերեֆորդ, շորթորն, աբերդին-անգուս, շարոլե, լիմուզին և այլն), որոնք ունեն կայուն ժառանգական հատկանիշներ:

Նշված երկրներում ամբողջ տարվա ընթացքում կենդանիներն արոտավայրում պահվում են ազատ: Մորթից առաջ դրանց մսային մթերատվությունը գնահատվում է սնվածության բալային համակարգով, այն է՝ որոշակի մարմնամասերի գնում, շոշափում և ակնադիտական եղանակով գնահատում: Մարմնամասերի մշակված ձևաբանական և որակական ցուցանիշների հիման վրա նախրի միս արտադրող հիմնական միավորների (մայր կովերի) սնվածության մակարդակի բալային գնահատումն ապահովում է տնտեսության արդյունավետությունը և, ամենակարևորը՝ մսի որակը (Խ.Մ. Սիմոնյան, 2012, <https://www1.agric.gov.ab.ca>):

Նյութը և մեթոդները

Հայաստանի որոշ շրջաններում արոտավայրերը թույլ են տալիս մսային ուղղության ցեղեր աճեցնել առանց հավելյալ կերի, ինչը կրճատում է կերակրման և պահվածքի ծախսերը: Ամառային արոտավայրերի լեռնային լանդշաֆտի բազմազանության շնորհիվ հնարավոր է լինում կենդանիներին լեռնային բարձրորակ կանաչով ապահովել տարվա 10 և ավելի (երբեմն 11) ամիսներին: Բնակլիմայական պայմաններով ստեղծվում է ձմեռային արածեցման հնարավորություն, ինչը նվազեցնում է կերի պահեստավորման և անասնագոմբերում կերակրում կազմակերպելու ծախսերը: Լեռնային բազմաթիվ գետակների և առվակների առկայությամբ նաև կրճատվում են կենդանիներին ջրով ապահովելու ծախսերը (Խ.Մ. Սիմոնյան, 2012):

2020 թ. հունվարին ՌԴ Լենինգրադի մարզի Կիբորգսկի շրջանի Լոսևո գյուղում գտնվող «Լոսևո» ԲԲԸ գյուղացիական տնտեսությունից ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի տարածաշրջանի Գոշ գյուղ են ներկրվել մաքրացել արբերդին-անգուս ցեղի 30 գլուխ երինջ և 2 գլուխ ցուլ:

Տավուշի մարզը հարուստ է օրգանական գյուղատնտեսության համար նպաստավոր պայմաններով: Կլիման չափավոր տաք է՝ չոր մերձարևադարձայինից (շոգ ամառ, մեղմ ձմեռ) մինչև բարեխառն (մեղմ ամառ): Ըստ ծովի մակերևույթից բարձրության՝ հերթափոխվում են լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան լանդշաֆտային գոտիները: Տարածքի 51 %-ը զբաղեցնում են անտառները: Նոսրանտառային և լեռների գագաթնային գոտիները հարուստ են ալպյան բուսականությամբ:

Աբերդին-անգուս ցեղի կենդանիները լավ են հարմարված ինչպես չափավոր շոգ, այնպես էլ ցուրտ կլիմայական պայմաններին: Դրանք պահվում են ազատ՝ «Էլեկտրական հովվի» օգնությամբ հսկվող տարածքում: Միս արտադրող հիմնական միավորը մայր կովն է: Այն տարեկան տալիս է մեկ (հազվադեպ՝ երկու)

հորթ: Հորթերն աճեցվում են մինչև 18 ամսականը, ապա իրացվում: Մայրական գլխաքանակը պարբերաբար թարմացվում է: Մայրերին ծնելու և հորթերին ինսամելու օգնություն չի տրամադրվում: Հորթերը «մոր տակ» պահվում են մինչև 6-8 ամսականը. պահվածքը և աճեցմունը պարզ են (Խ.Մ. Սիմոնյան, 2012):

Մսային ուղղության տավարը դիմացկուն է, օրգանիզմում պահուստային նյութերի կուտակման շնորհիվ կարողանում է ոչ բարենպաստ պայմաններում դիմանալ՝ սնվածությունը չկորցնելով (եթե մինչ այդ վերջինիս մակարդակը եղել է բարձր): Կաթնային ուղղության կովերի մոտ սնվածությունը միշտ 0,5 բալով ցածր է պահանջվող ստանդարտից: Ընդ որում՝ 4 բալը նվազագույն շեմն է: Նախրի սնվածության գնահատումն ըստ ստանդարտի հնարավորություն է տալիս վերահսկել կենդանիների ընդհանուր վիճակը և դրանց օրգանիզմում պահուստային նյութերի կուտակումը (<https://beeflambnz.com>):

Սնվածությունը գնահատվում է 1-10 բալային համակարգով: Ըստ տարվա եղանակի և ֆիզիոլոգիական վիճակի՝ նախրի կովերի միջին սնվածությունը գնահատվում է 5-7 բալ, իսկ հյուծվածությունն ու գերսնվածությունը՝ համապատասխանաբար 3 և 8 բալ:

Նշված բալային համակարգը կիրառվում է մսային ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մսային մթերատվության գնահատման նպատակով (<https://www1.agric.gov.ab.ca>, <https://beeflambnz.com>):

Արդյունքները և վերլուծությունը

Կենդանի զանգվածի գնահատման համեմատությամբ սնվածության գնահատումը գործնականորեն նախընտրելի է: Առաջին հերթին այն մարմնի վիճակի ավելի ճիշտ գնահատումն է որոշակի ժամանակահատվածի հաշվարկով և կախված չէ հողիության ժամկետից, պտղի չափերից ու զանգվածից: Մսային ուղղության տավարի աճը տևում է մինչև 6 տարեկանը. կենդանի զանգվածն ավելանում է, իսկ սնվածությունը՝ ոչ:

Ի տարբերություն կենդանի զանգվածի՝ սնվածությունը հնարավոր է գնահատել հեռվից՝ ակնադիտական եղանակով: Բարձրատու նիհար և ցածրատու լեցուն կովերը կարող են ունենալ միևնույն կենդանի զանգվածը (<https://futurebeef.com.au>):

Հետազոտությունների համաձայն՝ 520 կգ լիատարիք կովերի սնվածությունը գնահատվում է 4-8 բալ՝ 30 կգ կենդանի զանգվածի հաշվով 1 բալ (<https://beeflambnz.com>):

Ծնից մինչև զուգավորում ընկած ժամանակահատվածում (սերվիսի շրջան) մսային ուղղության տավարի սնվածության բարձրացումը նպաստում է հորթերի աճն ապահովելու համար անհրաժեշտ քանակությամբ կաթնատվությանը և բեղմնավորմանը: Այդ ժամանա-

կահատվածում պետք բարձրացնել կովերի կերակրման մակարդակը՝ ապահովելով 6 բալից ոչ պակաս սնվածություն: Առատ կերակրման դեպքում հնարավոր է օրական ստանալ միջինը 1 կգ քաշած: Յուրաքանչյուր մեկ բալի դեպքում միջին օրական քաշածը կազմում է 0,4 կգ: Եթե կովերի սնվածությունը չի հասնում 6 բալի, ապա զուգավորումը հետաձգվում է, նվազում է կաթնատվությունը, ինչի հետևանքով դանդաղում է հորթերի աճը (<https://beeflambnz.com>):

Կաթի դադարի (ցամաքի) շրջանն արոտային պահվածքի դեպքում համընկնում է ձմեռային շրջանին: Այդ ժամանակահատվածում սնվածությունը պայմանավորված է ամառային արոտի շրջանով և պետք է կազմի 6-8 բալ: 7 բալ սնվածությամբ կենդանիները կաթի դադարի շրջանում կորցնում են ընդամենը 2 բալ: 4 բալ և պակաս սնվածությամբ կենդանիներին անհրաժեշտ է լրացուցիչ կերակրել, որպեսզի ծնի պահին դրանց սնվածությունը կազմի 5 բալ: Բացի այդ՝ բարձր սնվածությամբ կենդանիները դիմանում են խստաշունչ ձմռանը: Անհրաժեշտ է գնահատել յուրաքանչյուր կովի սնվածությունը, այլ ոչ թե նախրի սնվածության միջին մակարդակը:

Սնվածության նպատակային գնահատման կորագիծը ներկայացված է նկար 1-ում:

Անհրաժեշտ է սնվածության նպատակային գնահատումը կատարել որոշակի ժամանակահատվածներում (<https://beeflambnz.com>).

Կաթի դադարի շրջանում սնվածությունը գնահատվում


է աշնանը՝ ձմռան ամիսներին կենդանիների դիմացկունությունը և կերի պաշարը որոշելու նպատակով:

Ձմեռային շրջանում սնվածության գնահատումը հնարավորություն է տալիս վերահսկել սնվածության կորուստը և կազմակերպել 4 բալ սնվածությամբ կովերի լրացուցիչ կերակրում:


Ծնից երկու ամիս առաջ կատարվող գնահատումը սնվածության բարձրացման վերջին հնարավորությունն է:

Ծնից մինչև զուգավորումն անհրաժեշտ է վերահսկել սնվածությունը՝ զուգավորման պահին 6 բալ սնվածություն ապահովելու համար: Նախընտրելի է, որ աշնանային շրջանում մայրական կազմի սնվածությունը կազմի 7 բալ, քանի որ մինչև ծին ընկած ժամանակահատվածում 2 բալ կորստի դեպքում հնարավոր է խուսափել լրացուցիչ կերակրման ծախսերից: 560 կգ կենդանի զանգվածով և 7 բալ սնվածությամբ կովը 19 %-ով քիչ էներգիա է ծախսում, քան նույն զանգվածով, բայց 7 բալից ցածր սնվածությամբ կովը: Ձմռան ժամանակահատվածի համար 19 %-ով քիչ էներգիայի ծախսը (9 ՄՋ/կգ) համարժեք է 12 հալ (16 կգ-անոց) խոտին (<https://beeflambnz.com>):

Վերջինիայի պետական համալսարանի աշխատակիցների հետազոտությունների համաձայն՝ ծնից մինչև զուգավորումն ընկած ժամանակահատվածում կենդանիների սնվածությամբ են պայմանավորված հասուն ձվաբջի արտադրությունը և արդյունավետ բեղմնավորումը (նկ. 2):



Նկ. 1. Սնվածության նպատակային գնահատման կորագիծը (<https://beeflambnz.com>):



Նկ. 2. Սնվածությամբ պայմանավորված արդյունավետ բեղմնավորման ապահովումը (<https://vtechworks.lib.vt.edu>):

Ծնից մինչև զուգավորումն ընկած ժամանակահատվածում սնվածության վերահսկողությունը կնպաստի նախրում հղի կովերի գլխաքանակի ավելացմանը և հորթատվության մակարդակի բարձրացմանը (<https://vtechworks.lib.vt.edu>):

Եզրակացություն

Ըստ հետազոտությունների՝ կենդանի զանգվածի գնահատման 4-8 բալ սնվածության դեպքում մեկ բալը համապատասխանում է մոտ 30 կգ կենդանի զանգվածին: Անհրաժեշտ է որոշակի ժամանակահատվածներում կատարել սնվածության նպատակային գնահատում:

Մինչև ծինն ընկած ժամանակահատվածում մայրական կազմի սնվածության 2 բալ կորստի դեպքում լրացուցիչ կերակրման ծախսերից խուսափելու համար անհրաժեշտ է աշնանը դրանց սնվածությունը հասցնել 7 բալի: 560 կգ կենդանի զանգվածով և 7 բալ սնվածությամբ կովը 19 %-ով քիչ էներգիա է ծախսում (9 ՍՁ/կգ), քան նույն զանգվածով, բայց 7 բալից ցածր սնվածությամբ կովը:

Ներկայացված բալային համակարգը կիրառվում է մսային ուղղության տավարի տարբեր ցեղերի և դրանց խառնածինների մսային մթերատվության գնահատման նպատակով:

Գրականություն

1. Սիմոնյան Խ.Ս. Հայաստանում բուծվող տավարի ցեղերը և նրանց բարելավման ուղիները. - Եր., 2004. - 558 էջ:
2. Սիմոնյան Խ.Ս., Սիմոնյան Ա.Խ. Տավարի պահվածքի տեխնոլոգիան. - Եր., 2012. - 125 էջ:
3. Վլադիմիրով Վ.Լ. Անասնաբուժական մթերքների արտադրության ինտենսիվացման հիմունքներ / Թարգ. Վ.Բ. Ոսկանյանի. - Եր., 1989. - 235 էջ:
4. <https://beeflambnz.com/knowledge-hub/PDF/beef-cow-body-condition-scoring> Beef Cow Body Condition Scoring (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
5. <https://futurebeef.com.au/knowledge-centre/body-condition-score-for-beef-cattle/> Body Condition Score For Beef Cattle (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
6. <https://vtechworks.lib.vt.edu/bitstream/handle/10919/74359/Body%20Condition%20Scoring%20Beef%20Cows.pdf?sequence=1> Body Condition Scoring Beef Cows (դիտվել է 2020 թ. օգոստոսին).
7. [https://www1.agric.gov.ab.ca/\\$department/deptdocs.nsf/all/agdex9622/\\$FILE/bcs-beef-cow.pdf](https://www1.agric.gov.ab.ca/$department/deptdocs.nsf/all/agdex9622/$FILE/bcs-beef-cow.pdf) What's the Score: Beef Cow Body Condition Scoring (BCS) Guide (դիտվել է 2020 թ. օգոստոսին).

Оценка продуктивности мясного скота по балльной системе упитанности

А.В. Азизян

Национальный аграрный университет Армении

А.М. Погосян

ООО "Маунтен Биф Компани"

Ключевые слова: *порода, признак, упитанность, кормление, содержание*

Аннотация. Оценка упитанности стада по стандарту дает возможность контролировать общее состояние животных и накопление в их организме резервных веществ. Упитанность оценивается по шкале от 1 до 10 баллов. В зависимости от сезона и физиологического состояния, средняя упитанность коров стада оценивается 5-7 баллов, а истощение и ожирение - соответственно 3 и 8 баллов. Отмеченная балльная система применяется с целью оценки мясной продуктивности различных пород мясных коров и их помесей.

Исследования продолжаются. Результаты будут представлены в следующих статьях.

Estimation of Beef Cattle Productivity per Body Condition Scoring System

A.V. Azizyan

Armenian National Agrarian University

A.M. Poghosyan

"Mountain Beef Company", LLC

Keywords: *breed, feature, body condition, feeding, keeping*

Abstract. Estimation of the cattle's body condition per the standard enables to control the general state of the animals and storage of the reserve substances in their bodies. The body condition is rated through 1-10 scoring scale system. According to the weather conditions and physiological state, the average body condition of the herd's cows is estimated as 5-7 points, while emaciation and overfeeding - 3-8 points accordingly. The mentioned scoring system is applied for the productivity estimation in different breeds of beef cattle and their crossbreeds.

The studies are still in process and the findings will be published in the upcoming articles.

*Ընդունվել է՝ 11.05.2021 թ.
Գրախոսվել է՝ 08.09.2021 թ.*